պետստանդարտի կողմից չարտոնագրված սարքերից (այդ թվում ջեռուցման) օգտվելու,

- չարտոնված կազմակերպության կամ անհատի միջոցով բաժանորդի պատասխանատվության տակ գտնվող ներտնային գազահամակարգը նորոգելու, ինչպես նաև տեխնիկական սպասարկման և այլ աշխատանքների կատարելու,
- ծխաօդատար ուղիների, այդ տվում թիթեղյա խողովակներով միացումների, տեխնիկական ստուգման ժամկետանց ակտով և (կամ) անսարք վիճակում շահագործելու համար:

Գազամատակարարման և (կամ) գազի ներտնային համակարգում գազի արտահոսքի հայտնաբերման կամ վթարների դեպքում դադարեցնել գազի սպառումը, չօգտվել բաց կրակից և անհապաղ տեղեկացնել գազի վթարային ծառայությանը (հեռ. 1-04):

Մատակարարը պարտավոր է ահազանգը ստանալուց հետո, հնարավոր կարճ ժամկետում դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը:

Մատակարարը վերսկսում է գազամատակարարումը՝ վերոհիշյալ վտանգը վերացնելուց հետո՝ նախապես փոխհամաձանեցված օրը և ժամին:

Ներտնային համակարգի վթարի կամ վթարային իրավիճակների դեպքում գազամատակարարման դադարեցումից հետո մատակարարը պետք է միջոցներ ձեռնարկի ներտնային համակարգի վերականգնման համար՝ համաձայն սպասարկման համաձայնագրի:

Մատակարարը պարտավոր է ունենալ շուրջօրյա վթարային-կարգավարական ծառայություն մշտական գործող հեռախոսակապով՝ քաղաքացիների վթարային կանչերը, դրանց արձագանքելու ժամանակը և կատարված աշխատանքները համապատասխան գրանցամատյաններում գրանցելու և վթարները վերացնելու համար: Վթարային-կարգավարական ծառայության հեռախոսահամարի մասին մատակարարը պարտավոր է պարբերաբար տեղեկացնել քաղաքացիներին՝ զանգվածային լրատվամիջոցներով:

ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ԳԱԶԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Մատակարարված գազի հաշվառումն իրականացվում է ՀՀ-ում հավաստված հաշվառքի սարքերով:

Գազի հաշվարկային ժամանակաշրջանը օրացուցային ամիսն է:

Գազի առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցումը կատարում է մատակարարը՝ հաշվարկային ժամանակաշրջանի վերջին օրը, պարտադիր զննելով առևտրային հաշվառքի սարքի արտաքին վիճակը և կապարակնիքների ամբողջականությունը:

Բաժանորդն իրավունք ունի մասնակցել ցուցմունքի գրանցմանը:

Հաշվարկային ժամանակաշրջանում մատակարարված գազի համար մատակարարը բաժանորդին ներկայացնում է վճարման փաստաթուղթ:

Բաժանորդը կատարում է վճարումը վճարման փաստաթղթում նշված ներկայացման ամսաթվին հաջորդող **7 օրվա ընթացքում**: Վճարման համար սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում, վճարման ժամկետի ավարտից հետո մատակարարը գրավոր զգուշացնում է բաժանորդին վճարում կատարելու մասին: Եթե զգուշացման պահից սկսած, 3 օրվա ընթացքում բաժանորդը վճարում չի կատարել, մատակարարն իրավունք ունի դադարեցնել նրա գազամատակարարումը, դադարեցումից անմիջապես առաջ նրան զգուշացնելով:

Մատակարարը վերսկսում է գազամատակարարումը մատակարարված գազի համար բաժանորդի վճարումը հաստատող փաստաթուղթը նրան ներկայացնելուց (այդ թվում, էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) հետո՝ 24 ժամվա ընթացքում, բաժանորդին այդ մասին նախապես զգուշացնելուց հետո:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Սույն տեղեկատվական թերթիկը վերաբերվում է բնակչությանը բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններին, մասնավորապես գազի համակարգի անվտանգության ապահովմանը, մատակարարի և բնակիչների պարտականություններին, մատակարարված գազի հաշվառման և վճարման կագերին և հարակից այլ հարցերին:

Հունիս 2005

ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (հետագա տեքստում՝ հանձնաժողով) 08.07.2005թ-ի որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» համաձայն, բնակչության գազամատակարարումը իրականացվում է գազամատակարարման պայմանագրի հիման վրա:

Գազամատակարարման պայմանագիրը (հետագա տեքստում՝ պայմանագիր) մատակարարի և բաժանորդի միջև կնքված գազի մատակարարման պայմանները, իրավունքներն ու պարտականությունները սահմանող փաստաթուղթ է: Այն ներառում է նաև ներտնային համակարգի պարբերական տեխնիկական սպասարկման պայմանները, ծավալները և սպասարկման համար վճարման կարգը սահմանող տեխնիկական սպասարկման համաձայնագիրը:

ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Նոր բաժանորդներին գազի մատակարարումը մատակարարը սկսում է հետևյալ պայմանների դեպքում.

ա) ներտնային համակարգը մատակարարի կողմից փորձարկվել, կարգաբերվել և ստուգվել է նրա համապատասխանությունը նախագծին:

բ) ընդունող հանձնաժողովը սահմանված կարգով կազմել է ներտնային համակարգի թողարկման թույլատրման ակտը,

գ) կատարվել են միացման պայմանագրի բոլոր պայմանները,

դ) մատակարարը բաժանորդի հետ կնքել է պայմանագիր,

ե) պայմանագրով սահմանված կարգով մատակարարը հրահանգավորել է բաժանորդին (վարձակալին, փաստացի օգտագործողին) գազի սարքերի անվտանգ շահագործման կանոնների պահպանման մասին:

Մատակարարը պարտավոր է առաքման կետում ապահովել պայմանագրում նշված գազի ճնշումը (ճնշման թույլատրելի տիրույթը) և որակական ցուցանիշները: Տեխնիկական կանոնակարգերով նախատեսված դեպքերում մատակարարը պետք է մատակարարի հոտավետացված (օդորանտացված) գազ:

Մատակարարը բաժանորդներին վաճառում է սահմանված որակական ցուցանիշներին համապատասխանող գազ՝ **հանձնաժողովի սահմանած սակագներով,** իսկ այդ ցուցանիշներին չհամապատասխանելու դեպքում՝ պայմանագրային գնով:

Ներկայումս ամսական մինչև 10.000 նորմալ խորանարդ մետր սպառում ունեցող սպառողների համար գազի սակագինը կազմում է 59000 դրամ (ներառյալ ԱԱՀ)՝ յուրաքանչյուր 1000 նորմալ խորանարդ մետր բնական գազի դիմաց:

Մատակարարը պարտավոր է նվազագույնի հասցնել յուրաքանչյուր բաժանորդի գազամատակարարման ընդհատումների թիվը և ընդհատման տևողությունը, ընդ որում ընդհատումների թիվը 12 ամսվա ընթացքում չպետք է գերազանցի 4 անգամը, իսկ յուրաքանչյուր ընդհատման առավելագույն տևողությունը՝ 36 ժամը, բացառությամբ եթե ընդհատումը ֆորս-մաժորի հետևանք է:

Գազիֆիկացվող բնակավայրերում նոր բաժանորդների միացման պատճառով բաժանորդների գազամատակարարման ընդհատումները չեն ներառվում ընդհատումների հաշվառվող քանակի մեջ:

Միացման պայմանագրով սահմանված տեխնիկական պայմանները դրանց կատարումից հետո կարող են փոփոխվել միայն կողմերի փոխհամաձայնությամբ, հետևյալ պայմաններով.

ա) մատակարարի նախաձեռնությամբ մատակարարման ցանցում կատարված փոփոխությունների հետևանքով բաժանորդների գազասպառման համակարգերում փոփոխությունների կատարման ծախսերը իրականացնում է մատակարարը,

բ) բաժանորդի նախաձեռնությամբ գազասպառման համակարգի, այդ թվում միացման կետի փոփոխությունների, հաշվառքի սարքերի վերատեղակայման համար անհրաժեշտ ծախսերը կատարում է բաժանորդը՝ նոր միացման պայմանագրի հիման վրա:

Բնակչի նախաձեռնությամբ գազօգտագործող սարքավորման փոխարինման կամ նոր սարքերի տեղադրման կամ ներտնային համակարգում այլ փոփոխություններ կատարելու համար բնակիչը գրավոր դիմում է մատակարարին, ներկայացնելով անհրաժեշտ տեղեկատվություն այդ փոփոխությունների մասին: Մատակարարը պարտավոր է **15-օրյա ժամկետում** քննարկել դիմումը, անհրաժեշտ փոփոխություններ կատարել ներտնային համակարգի նախագծում կամ թույլատրել գազօգտագործող սարքավորման փոխարինումը:

Դիմումը մերժելու դեպքում մատակարարը պարտավոր է սպառողին ներկայացնել գրավոր հիմնավորում:

ԳԱԶԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Գազամատակարարման ցանցի սեփականատերը (տիրապետողը) պարտավոր է ապահովել ցանցի պատշաճ տեխնիկական վիճակը, շահագործումը, տեխնիկական սպասարկումը և նորոգումը, ապահովել մատակարարման հուսալիությունը, աշխատանքի անվտանգությունը, մարդկանց առողջության, կյանքի ու գույքի անվտանգությունը և շրջակա միջավայրի պահպանումը:

Մատակարարը պարտավոր է ապահովել գազասպառման համակարգի պատշաճ տեխնիկական վիճակը և անվտանգությունը, շահագործումը, սպասարկումը, նորոգումը, իր տիրապետման կամ օգտագործման տակ գտնվող տարածքում տեղակայված գազամատակարարման ցանցի տարրերի պահպանությունը՝ ապահովելով դրանց հուսալիությունը, աշխատանքի անվտանգությունը, մարդկանց առողջության, կյանքի ու գույքի անվտանգությունը և շրջակա միջավայրի պահպանումը:

Բնակիչը պարտավոր է ներտնային համակարգի օգտագործման ընթացքում պահպանել տեխնիկական կանոնակարգերով սահմանված անվտանգության պահանջները և գազօգտագործող սարքավորման օգտագործման անվտանգության կանոնները:

Անվտանգության հիմնական պահանջներ

Գազի ներտնային համակարգի (սկսած մուտքային փականից) անվտանգ շահագործման համար պատասխանատվություն է կրում բաժանորդը:

Գազի ներտնային համակարգի սպասարկումը և նորոգումը կատարվում է բաժանորդի հաշվին՝ համապատասխան որակավորման հավաստագիր ունեցող անձի (կազմակերպության) կողմից, պայմանագրային հիմունքներով:

Գազի ներտնային համակարգից օգտվելու անվտանգության տեխնիկայի կանոնների և գազասարքերի ամբողջական պահպանման համար պատասխանատվություն է կրում բաժանորդը, այդ թվում՝

- գազատար խողովակների ապօրինի միացումներ կատարելու,
- գազահաշվիչ հանգույցի ամբողջականությունը խախտելու,
- նախագծով նախատեսված գազի սարքավորումները տեղափոխելու կամ լրացուցիչ սարքավորումներ ինքնակամ միացնելու,
- գազաֆիկացման նախագծով չնախատեսված ինքնաշեն, ոչ գործարանային արտադրության, ՀՀ